



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԻ 50-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարիտոսեան Ուրբաթ օր Նիւ Եորք մեկնեցաւ, իր մասնակցութիւնը բերելու համար Ամերիկայի պփերուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայութեան եւ հոգեւոր մատակարարման 50-ամեակին նուիրուած պաշտօնական ձեռնարկին:

Շաբաթ Հոկտեմբեր 25-ի երեկոյեան, Նիւ Ճըրզիի Marriott պանդոկի սրահին մէջ տեղի պիտի ունենայ 50-ամեակի պաշտօնական ընդունելութիւնն ու ճաշկերոյթը, հովանաւորութեամբ Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Ս. Արք. Զօլոյեանի եւ մասնակցութեամբ Հիւսիսային Ամերիկայի երեք Թեմերու Առաջնորդներուն ու ժողովական ներկայացուցիչներու: Առաջնորդ Սրբազանը այս առիթով պատգամ մը պիտի փոխանցէ ու բարի երթ պիտի մաղթէ ծառայական աշխատանքին:

Կիրակի, Հոկտեմբեր 26-ին, նոյն առիթով հանդիսաւոր Ս. Պատարագ տեղի պիտի ունենայ Նիւ Ճըրզիի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ: Իր մասնակցութիւնը պիտի բերէ Առաջնորդ Սրբազանը:

PRELATE DEPARTS FOR NEW YORK TO PARTICIPATE IN 50TH ANNIVERSARY CELEBRATIONS

On Friday, Oct. 24, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, departed for New York to participate in the 50th anniversary celebrations of the Catholicosate of Cilicia's North American Prelacy.

The 50th anniversary celebratory banquet will take place on the evening of Saturday, October 25th, at the Marriott Hotel in New Jersey, under the auspices of H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern Prelacy, and with the participation of the Prelates and council members from the three Prelacies. The Prelate will attend the banquet and convey his message to the guests.

On Sunday, October 26th, the Prelate will participate in the celebration of Divine Liturgy at St. Vartanants Church in New Jersey.

ՇԱՐԱԹ, 1 ՆՈՅԵՄԲԵՐԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Շաբաթ, 1 Նոյեմբերի երեկոյեան ժամը 6-ին, Ազգային Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ Ս. Պատարագ պիտի մատուցուի, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր: Ծանօթ է, որ այս արարողութիւնները կը կատարուին ամսական հերթականութեամբ:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ Էսսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Քհնյ. Խաչատուրեան:

DIVINE LITURGY AT THE PRELACY CHAPEL

The next Divine Liturgy that will be celebrated at the Prelacy “St.Dertad and St. Ashkhen” Chapel will take place on Saturday, November 1st, at 6:00 p.m., under the auspices of the Prelate.

Pastor of Holy Martyrs Church Rev. Razmig Khatchadourian, will celebrate the Liturgy.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ 80-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Կիրակի, Յոկտեմբեր 26-ի յետմիջօրէին, ժամը 5-ին, Մոնթեպելլոյի «Բաղրամեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ Համազգայինի հիմնադրութեան 80-ամեակին նուիրուած յատուկ ճաշկերոյթ տօնակատարութիւնը:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Ազգային Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

HAMAZKAYIN 80TH ANNIVERSARY

On the evening of Sunday, October 26th, a banquet will take place in celebration of the 80th anniversary of Hamazkayin. The banquet will take place at “Bagramian” Hall of Holy Cross Cathedral in Montebello.

Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate and convey his blessings.

ՄԱՅՔԸԸ ՅԱԿՈՐԵԱՆԻ *The River Ran Red* ԺՊՊԱԿԵՆԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 24 Յոկտեմբերի երեկոյեան, Յոլիվուտի Egyptian թատերասրահին մէջ տեղի պիտի ունենայ ծանօթ մտաւորական եւ Յայ Դատի աշխատանքներուն մասնակից Մայքըլ Յակորեանի *The River Ran Red* վաւերագրական ժապաւենին առաջին ցուցադրութիւնը: Ծանօթ է որ Մայքըլ Յակորեան նուիրուած է Յեղասպանութեան մասին վաւերագրական ժապաւեններու պատրաստութեան ու ոճրային արարքներուն մութ ծալքերուն հանրութեան ծանօթացման: Այս ժապաւենը ականատեսներու վկայութիւններուն վրայ հիմնուած շարքի մը երրորդն է:

Յանուն Առաջնորդ Սրբազան Յօր, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ հոգեւոր հովիւներէն, Արժ. Տ. Արտակ Զիւյ. Տեմիրճեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

SCREENING OF J. MICHAEL HAGOPIAN'S *THE RIVER RAN RED*

The gala premiere screening of J. Michael Hagopian's final film of the Witnesses Trilogy *The River Ran Red* will take place on the evening of Friday, October 24th, at the Egyptian Theatre in Hollywood.

Rev. Fr. Ardak Demirjian will represent the Prelate.

ՀԱՅԱՍՏԱՆԻ Մ.Ո.Յ. ԱՄՊԻՈՆԻ 15-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵՒՆ

Հայաստանի մէջ 15 տարիներ առաջ հիմը դրուեցաւ Միջազգային Ուսումնասիրութեանց Հայագիտական Ամպիոնին, գլխաւորութեամբ տիար Րաֆֆի Յովհաննէսեանի:

Ի նպաստ սոյն ծրագրին, Կիրակի, Յոկտեմբեր 26-ին կ.ե. ժամը 4-ին, ընդունելութիւն մը տեղի պիտի ունենայ Տէր եւ Տիկին Գրիգոր Պզտիկեաններուն բնակարանը, Լոս Անճելըս:

Յանուն Առաջնորդ Սրբազան Յօր, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Աշոտ Զիւյ. Գամպուրեան ներկայ պիտի ըլլայ ընդունելութեան:

15TH ANNIVERSARY OF THE ARMENIAN CENTER FOR NATIONAL AND INTERNATIONAL STUDIES

In celebration of the 15th anniversary of the Armenian Center for National and International Studies, a reception with the Honorable Raffi Hovannisian will take place at the home of Mr. and Mrs. Krikor and Marilyn Bezdikian on Sunday, October 26th.

Rev. Fr. Ashod Kambourian will represent the Prelate.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԱՄԱՐՏԵՑ ԱՉՊԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դպրոցական վերամուտին առիթով, Առաջնորդ Սրբազանը վերջին օրերուն աւարտեց Ազգային վարժարաններու իր այցելութիւնները:

Երեքշաբթի, 21 Հոկտեմբերի առաւօտուն, Առաջնորդ Սրբազանը այցելեց Օրէն Բաունթի Արի Կիրակոս Մինասեան Ազգային Վարժարանը:



Սրբազանին կ'ընկերանային Օրէն Բաունթի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հրանդ Զինյ. Երեցեան, Ազգային Վարչութեան ատենապետ՝ Դոկտ. Կարօ Յակոբեան, եւ հնամակալ Մարմինի ներկայացուցիչ Իրաւաբան Վիգէն Բագրատունի: Ներկայ էին վարժարանի բարերար ամուլը՝ Տեր եւ Տիկին Սթիւ եւ Սեդա Մինասեաններ:

Առաջնորդ Սրբազանն ու հիւրերը ընդունուեցան վարժարանի տնօրէնուհի Դոկտ. Նայիրի Կորճեանի եւ վարժարանի պատասխանատուներուն կողմէ: Անոնք այցելեցին դասարանները. աշակերտները արտասանութիւններով եւ երգերով դիմաւորեցին Առաջնորդ Սրբազանն ու հիւրերը:

Այցելութեան աւարտին, վարժարանի գրադարանին մէջ տեղի ունեցաւ մտերմիկ հիւրասիրութիւն մը:



Հինգշաբթի, 23 Հոկտեմբերին, Առաջնորդ Սրբազանը այցելեց Հոլիվուտի Ռոզ եւ Ալեք Փիլիպոս Ազգային վարժարանը, ընկերակցութեամբ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեանի եւ հնամակալ Մարմինի ներկայացուցիչ Տիկին Մակի Սարգունի: Ներկայ էր եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Դոկտ. Միսաք Պարսամեան:

Վարժարանի մուտքին, Առաջնորդ Սրբազանն ու հիւրերը դիմաւորուեցան վարժարանի տնօրէն Դոկտ. Վիգէն Եագուպեանի ու վարժարանի պատասխանատուներուն կողմէ:

Առաջնորդ Սրբազանը այցելեց դասարանները. աշակերտները բարի գալուստի մաղթանքներով դիմաւորեցին Առաջնորդ Սրբազանը եւ հիւրերը:

11-րդ դասարանի աշակերտներուն հետ, վարժարանի գրադարանին մէջ, զրոյց հանդիպում մը տեղի ունեցաւ եւ Առաջնորդ Սրբազանը պատասխանեց այժմեական նիւթերու մասին իրենց հարցերուն:

Առաջնորդ Սրբազանը օրինեց աշակերտները եւ յաջողութեան մաղթանքներ փոխանցեց:

PRELATE CONCLUDES SCHOOL VISITS

Over the past week, the Prelate concluded his annual school visits with visits to Ari Guiragos Minassian and Rose and Alex Pilibos Schools.



The Prelate visited A.G. Minassian School on the morning of Tuesday, October 21st, accompanied by Pastor of Forty Martyrs Church Rev. Fr. Hrant Yeretzian, Executive Council Chair Dr. Garo Agopian, and Board of Regents member Mr. Viken Pakradouni. School sponsors Mr. and Mrs. Steve and Seta Minassian were also present.

Upon their arrival the Prelate was welcomed by Principal Dr. Nairy Gorjian and administration. They visited classrooms where they were greeted by the students with songs and recitations. A reception in the library followed.



On Thursday, October 23rd, the Prelate visited Pilibos School, accompanied by Pastor of St. Garabed Church Archpriest Fr. Vicken Vassilian, Board of Regents member Mrs. Maggie Sarkouni, and church Board of Trustees Chair Dr. Misak Barsamian.

The Prelate was welcomed by Principal Dr. Viken Yacoubian and school administrators, after which they visited classrooms. The Prelate and delegation then met with 11th grade students at the school library where a question and answer session took place between the Prelate and students. The visit concluded with the Prelate conveying his blessings to the students.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՀՈՎԱՆԱԴՈՐԵՑ Բ.Դ. ՏԱՐՈՒԱՆ ՆՈՒԻՐՈՒԾ Ս. ՆԱՀԱՏԱԿՎԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԻՆ

Քրիստոնեական Դաստիարակութեան Տարուան Նուիրուած ձեռնարկներու ծիրին մէջ, Երեքշաբթի, 21 Հոկտեմբերի երեկոյեան, Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ դասախօսական ձեռնարկ մը, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր:



Դասախօսն էր Արժ. Տ. Խորէն Ա. Քիւյ. Հապէշեան: Ներկայ էին հոգեւորականաց դասու անդամներ, Ս. Նահատակաց եկեղեցւոյ ժողովականութեան անդամներ եւ հաւատացեալներ:

Ձեռնարկին հանդիսավարն էր Տիկին Քնար Գորթոշեան, որ իր բացման խօսքէն ետք, հրաւիրեց դասախօս քահանայ հայրը տալու իր դասախօսութիւնը, որուն նիւթն էր.- «Քրիստոնեութիւնը արդի ընկերային հարցերուն եւ երիտասարդական տազնապներուն ու մտահոգութիւններուն ի՞նչ լուծումներ եւ պատասխաններ ունի տալիք»:

Յայտագիրը ուներ գեղարուեստական բաժին. եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի աշակերտները ելոյթ ունեցան երգերով եւ արտասանութիւններով, երգեհոնի

ընկերակցութեամբ դպիր Յովիկ Քեօշկերեանի, ապա շարականներու եւ հոգեւոր երգերու մասնակցութեամբ, ելոյթ ունեցան եկեղեցւոյ դպրաց դասի անդամները, երգեհոնի ընկերակցութեամբ խմբավար Կոմիտաս Քէշիշեանի:



Դասախօսական երեկոյին եզրափակիչ խօսքը արտասանեց ու իր օրհնութիւնը փոխանցեց Առաջնորդ Սրբազանը:

Այնուհետեւ, ներկաները եկեղեցւոյ շրջափակին մէջ վայելեցին հոգաբարձութեան ու տիկնանց միութեան կողմէ պատրաստուած հիւրասիրութիւնը:

Քրիստոնեական Դաստիարակութեան տարուան նուիրուած դասախօսութեանց շարքը պիտի շարունակուի յառաջիկայ օրերուն. յառաջիկայ շաբթուան ձեռնարկները հետեւեալներն են. Չորեքշաբթի, 29

Հոկտեմբերին, երեկոյեան ժամը 7-ին, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի դասախօսէ Օրէնճ Քաունթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հրանդ Քիւյ. Երեքեան, նիւթ

ունենալով «Յովհան Մանդակունի Հայրապետի ճառը Սուրբ Հաղորդութեան խորհուրդի մասին»:

Իսկ Ուրբաթ, Հոկտեմբեր 31-ին, երեկոյեան ժամը 7-ին, Ֆրեզնոյի Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ պիտի դասախօսուէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վահան Զինյ. Կոստանեան, նիւթ ունենալով «Աստուածաշունչը աղբիւր Զրիստոնէական Դաստիարակութեան»:

PRELATE PRESIDES OVER “YEAR OF CHRISTIAN EDUCATION” LECTURE AT HOLY MARTYRS CHURCH

On Tuesday, October 21st, a lecture in the “Year of Christian Education” series took place under the auspices of and with the participation of the Prelate at Holy Martyrs Church in Encino. The lecturer was Archpriest Fr. Khoren Habeshian who spoke on the topic “The Christian Response to Contemporary Social Issues”.



Following opening remarks by Master of Ceremonies Mrs. Knar Kortoshian, the keynote speaker was invited to present his lecture. Sunday School students and the church choir participated in the artistic portion of the program with songs and recitations, accompanied on the organ by Mr. Hovig Keushgerian and Mr. Gomidas Keshishian, respectively.

Closing remarks were delivered by the Prelate. A reception followed in the church courtyard.



The next lecture in this series will take place on Wednesday, October 29th, at 7:00 p.m., at St. Mary’s Church in Glendale. Pastor of Forty Martyrs Church Rev. Fr. Hrant Yeretjian will lecture on “Patriarch Hovhan Mantagouni’s Discourse on the Sacrament of Holy Communion”.

On Friday, October 31st, Rev. Fr. Vahan Gosdanian will lecture at Holy Trinity Church in Fresno on “The Bible as the Foundation of Christian Education”.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՅ ԱՒԵՏ.
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ՎԵՐ. ՌԸՆԷ ԼԵՈՆՆԵԱՆԸ**

Չորեքշաբթի, 22 Հոկտեմբեր 2008ի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Հայ Աւետարանական Համայնքի Համաշխարհային Խորհուրդի Հայաստանի Ներկայացուցիչ Վեր. Ռընէ Լեւոնեանի: Հիւր հոգեւորականը Ազգ. Առաջնորդարան առաջնորդած էին Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան նախագահ Վեր. Յովսէփ Մաթոսեան եւ Վեր. Աբրահամ Չափարեան, ընկերակցութեամբ Ամերիկայի Հայ Աւետ. Եկեղեցւոյ ընկերակցութեան պատասխանատուներէն Տիար Տիգրան Եումուշաքեանի (արեւելեան շրջանէն):



Հանդիպումը առիթ եղաւ փոխադարձ ծանօթացման ու հոգեւոր ծառայութեան մասին տեղեկութեանց փոխանակման: Նկատի ունենալով, որ Վեր. Լեւոնեան եւ Տ. Եումուշաքեան առաջին անգամ ըլլալով կ'այցելէին Ազգ. Առաջնորդարան, Առաջնորդ Սրբազանը ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց Ազգ. Առաջնորդարանին ու անոր հովանիին տակ գործող եկեղեցիներուն, Ազգային

Վարժարաններուն ու միաւորներուն տարած ազգանուէր ու սերնդակերտ աշխատանքը: Ան նշեց, որ այս տարին Արեւմտեան մեր Թեմի հաստատման 35րդ տարեդարձն է, ու այս առումով, ան լուսաբանութիւններ տուաւ թեմի աճին ու առաքելութեան դաշտերու տարածման մասին:

Վեր. Ռ. Լեւոնեան, իր կարգին, մանրամասնութիւններ տուաւ Հայաստանի մէջ Հայ Աւետ. Եկեղեցւոյ վերահաստատման ու հոգեւոր ծառայութեան տարածման մասին: Ան յայտնեց, որ Հայաստանի անկախութեան վերահաստատումէն ետք, Հայ Աւետ. Եկեղեցին, իր կարգին, վերսկսած է Հայաստանի ու Արցախի մէջ իր ծառայական գործը, որ ընդհատուած էր Հայաստանի խորհրդայնացման հետեւանքով: Ան անդրադարձաւ Հայաստանի Հայ Աւետ. համայնքներու կեանքին, եկեղեցիներուն ու ժողովուրդին եւ որբերու տրամադրուած ինամքին, նշելով, որ այս աշխատանքները յաճախ կը կանգնին նիւթական, գործնական եւ այլ դժուարութիւններու դիմաց, այսուհանդերձ, եկեղեցին կը գործէ տարբեր խոչընդոտներ յաղթահարելու եւ ժողովուրդին ու հայրենիքին ծառայելու կամքով:

Հանդիպումի աւարտին, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում: Առաջնորդ Սրբազանը բարի երթ մաղթեց հիւր հոգեւորականներուն ու յատկապէս հայրենիքի մէջ անոնց ծառայութիւններուն:

**PRELATE WELCOMES ARMENIAN EVANGELICAL WORLD
COUNCIL REPRESENTATIVE IN ARMENIA
REV. DR. RENE LEONIAN**

On Wednesday, October 22nd, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Armenian Evangelical World Council Representative in Armenia Rev. Dr. Rene Leonian and accompanying guests Minister to the Armenian Evangelical Union Rev. Joe Matossian, Rev. Abraham Chaparian, and Armenian Missionary Association of America Administrative Director Mr. Dikran Youmoushakian.



The meeting offered the opportunity for the exchange of information between the Prelate and guests regarding the endeavors of their respective churches. Given it was the first visit of Rev. Dr. Leonian and Mr. Youmoushakian to the Prelacy, the Prelate conveyed to them the work that is carried out by churches, schools, and various councils and committees serving under the jurisdiction of the Prelacy, and noting that the 35th anniversary

of the Prelacy will be celebrated this year, highlighted the accomplishments of the past three decades.

Rev. Dr. Leonian spoke in detail of the reestablishment of the Armenian Evangelical Church and the expansion of their mission in Armenia and Artsakh following their independence over a decade ago, as well as of the challenges they at times face in this regards and means of overcoming these obstacles to better serve the Armenian people.

The meeting concluded with the exchange of mementos.

**ԿԼԵՆՏԵՅԼ-ՂԱՓԱՆ ՔՈՅՐ ՔԱՂԱՔՆԵՐ ՀՈՉԱԿՄԱՆ
ՏՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ**

Չորեքշաբթի, 22 Հոկտեմբերի երեկոյեան, Կլենտէյլի Ալեքս հանդիսասարահին մէջ, տօնակատարուեցաւ Կլենտէյլի եւ Ղաբանի քոյր քաղաքներ հռչակման 5-րդ տարեդարձը: Իրագործուեցաւ գեղարուեստական յայտագիր:

Ձեռնարկը Կլենտէյլ քաղաքի նախաձեռնութիւնն էր: Տեղեկութիւններ փոխանցուեցան քոյր քաղաքներու միջեւ տեղի ունեցած գործակցութեան մասին, մշակութային տնտեսական եւ դպրոցական մարզերուն մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հոր, Ազգային Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակության բաժանմունքի վարիչներեն՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ եղաւ ձեռնարկին:

GLENDALE-GHAPAN SISTER CITY ASSOCIATION CELEBRATES 5TH ANNIVERSARY

On Wednesday, October 22nd, the 5th anniversary of the Glendale-Ghapan Sister City Association was celebrated at the courtyard of the Alex Theatre in Glendale. The event was organized by the Glendale-Chapan Sister City Association and the City of Glendale.

During the reception, a report was given to the guests of the collaboration between the two cities and of the recent activities and projects of the association. An artistic program also took place.

Very Rev. Fr. Muron Aznikian represented the Prelate.

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՆ ԱՌԹԻ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԱՏԱՐԱԳԵՑ Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Կիրակի, 19 Հոկտեմբեր 2008-ին, Օրենճ Բաունթիի Ս. Բառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ, տարիներու աւանդութեան համաձայն, նախաձեռնութեամբ Սրբոց Բառասնից Մանկանց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին եւ Հոգաբարձութեան, եւ կազմակերպութեամբ Արի Կիրակոս Մինասեան Ազգ. Վարժարանի Տնօրէնութեան եւ ծնողա-ուսուցչական մարմինին, հանդիսաւորապէս տօնախմբուեցաւ Սրբոց Թարգմանչաց յիշատակը՝ եպիսկոպոսական Ս. Պատարագով եւ Հայ Գիրքի ցուցահանդէսով:



Պատարագիչն էր Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան: Սրբազան Հոր արընթերակայ էր եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Բիւյ. Երեցեան:

Պատարագիչ Սրբազան Հայրը, իր քարոզին մէջ, անդրադարձաւ Թարգմանիչ Վարդապետաց օրերուն Հայաստանի մէջ տիրող քաղաքական տխուր վիճակին, ինչպէս նաեւ Հայ լեզուին ու կրօնքին դժուարութիւններուն. այդ

կացութիւնը մեր ժողովուրդին դիմագիծը դրած էր աղաւաղումի վտանգին տակ, կ'արգելակէր Հայոց Եկեղեցւոյ բարգաւաճումը:

Հայ ժողովուրդի դիմակալած կրօնական եւ աշխարհիկ վտանգին դիմաց, կարծեք հրաշքի ներգօր եւ երկնահաս ուժ մը՝ Աստուած Ինք, անգամ մը եւս, ինչպէս դար մը առաջ յայտնուած էր Հայաստան աշխարհի երկնակամարի վրայ ու Իր մատով ուրուագծած էր Հայոց Եկեղեցւոյ հիմերը, այս անգամ տեսիլիքի մը մէջ կը յայտնուէր Ս. Մեսրոպ Վարդապետին՝ իր ձեռքով կերտելու համար սքանչելիքը Հայոց ոսկեղնիկին՝ Հայոց Այբուբենին:

Ապա Պատարագիչ Սրբազան Հայրը, մէջբերելով շարականին բառերը, ըսաւ. «Սքանչելագործ Աստուած, մեզի ողորմեցար եւ երանելի վարդապետին միջոցաւ սքանչելիքները ցոյց տուիր, որպէսզի անով կարենանք տեսնել երկնապարգեւ զօրութիւնը՝ հրաշք գիրերը Հայոց լեզուին»:

Աստուածապարգեւ այդ գիրերով, խումբը թարգմանիչ վարդապետներուն, Աստուածաշունչ Մատենը հայերէնի թարգմանեց, որպէսզի հայ հաւատացեալը կարենայ ինքզինք հարազատ կապուածութեան մէջ պահէ իր ստեղծիչին՝ Աստուծոյ հետ. որովհետեւ, շարունակեց Սրբազանը, «Աստուածաշունչ Մատենին հայերէն թարգմանութեամբ՝ հայը աւելի հայացաւ եւ սկսաւ Աստուծոյ հետ հայերէն խօսիլ»:

«Այսօր, երբ կը պանծացնենք թարգմանիչ վարդապետաց երախտարժան վաստակը, իբրեւ ժառանգորդներ՝ որքանով մենք զմեզ տերը կը զգանք այդ մշակոյթին, Հայ լեզուին ու գրականութեան եւ անոնց մեզի թողած աւանդին: Պետք է արժեցնենք հաւատարիմ եւ ճշմարիտ ժառանգորդներ ըլլալու իրողութիւնը եւ մեր զաւակներուն սորվեցնենք հայերէն լեզուն», շարունակեց Առաջնորդ Սրբազանը եւ կոչ ուղղեց ծաղկուն պահելու հայ կրթական օճախները, յատկապէս Օրէնճ Զաւունթիի Արի Կիրակոս Մինասեան Ազգ. Վարժարանը, եւ զօրակցելով նոր Տնօրէնուհիին՝ Տոկոտ. Նայիրի Կեօրճեանի՝ առաւել եւս ծաղկուն ու բարգաւաճ պահել վարժարանը՝ ի նպաստ մեր զաւակներուն հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան:

Յաւարտ Ս. Պատարագի, Սրբազան Հայրը թափօրով եւ «Որք զարդարեցին» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ «Յարութի Պարսամեան» Հայ Կեդրոնի «Ղազարեան» սրահ, ուր կազմակերպութեամբ Արի Կիրակոս Մինասեան Ազգ. Վարժարանի տնօրէնութեան եւ ծնողա-ուսուցչական մարմիններուն՝ տեղի ունեցաւ Հայ Գիրքի նուիրուած ցուցահանդեսին բացումը՝ ձեռամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

Սրբազան Հայրը գնահատեց վարժարանի տնօրէնութիւնն ու կազմակերպիչ բոլոր նուիրեալները, որոնք աւանդութեան վերածած սոյն ձեռնարկով, ամէն տարի Հոկտեմբերին կը կազմակերպեն Հայ մշակոյթին նուիրուած Գիրքերու ցուցահանդեսը:

Ապա, ներկաները երգեցին «Կիլիկիա»ն եւ «Մեր Հարենիք»ը, որմէ ետք եկեղեցւոյ «Ղուկասեան» Սրահին մէջ մասնակցեցան եկեղեցւոյ Տիկնանց միութեան կողմէ պատրաստուած համադամ սիրոյ սեղանին:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AT FORTY MARTYRS CHURCH AND PRESIDES OVER OPENING OF ANNUAL BOOK FAIR

In celebration of Armenian Culture Month and in keeping with a years-long tradition, the Pastor and Board of Trustees of Forty Martyrs Church, in conjunction with the administration and parent support committee of A.G. Minassian School, had organized a book fair that took place on Sunday, October 19th, at the “Ghazarian” Hall of the “Harout Barsamian Armenian Center” in Orange County.

The day began with Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who was assisted at the altar by parish priest Rev. Fr. Hrant Yeretzian.



The Prelate began his sermon by referencing the situation in Armenia at the time of the Translator fathers of our church and the unfavorable conditions that threatened the unique heritage of the Armenian people. In this dire situation, it was by the grace of God alone that St. Mesrob Mashdoots invented the Armenian alphabet, thus ushering in a new age and cementing the national identity of the Armenian people. With the translating of the Bible, the Word of God became readily available for all the people to read and study. “As the heirs

to this legacy of our Translator fathers, let us remain true to them by fostering the Armenian language in our youth”, continued the Prelate. He also urged the faithful to continue to support and back A.G. Minassian School in all its endeavors, and contribute actively to its progress for the benefit of our youth and their education and instruction.

Following Divine Liturgy the Prelate and parishioners proceeded to “Ghazarian” Hall where the Prelate presided over the opening of the book fair and commended the organizers for honoring Armenian Culture Month by keeping the tradition of the book fair alive for all these years.

A reception followed at “Gugasian” Hall.